

«ԱՐՄԱՏ ՀԱԻԱՏՈՅ»-Ի ԱՂԲԻԻՐՆԵՐԻՑ (Գ)*

(ՅԱԿՈՒ ՍՐՃԵՑԻ — ԶԵՆՈՒ ԵԴԵՍԱՅԻ — ԴԱՀԵՂԱ ԵԴԵՍԱՅԻ)

Օգտագործում ենք հետեւեալ յայտարարումները:

ԱՀ — «Արմատ հաւատոյ» (ընդհանրապէս):

«Արմատ հաւատոյ»-ի ստորեւ բերուող հատուածներէ կ'ընդհատուած են նրա ընդարձակ խմբագրութեան Երեւանի No. 3295 ձեռագրի հիման վրայ, թէեւ բնագրական ճշգրտումներէ համար լռելեայն հաշուի են առնուել նաեւ ուրիշ օրինակներ:

Համ. խմբ. — «Արմատ հաւատոյ»-ի համառոտ խմբագրութիւնը ներկայացնող պայմանականորէն հիմնական օրինակը, Երեւանի ձեռ. No. 2080:

Ստուգ. օր. — «Արմատ հաւատոյ»-ի հեղինակային ստուգողական օրինակը, Երուսաղէմի ձեռ. No. 1331, որի մասին տեսնել «Էջմիածին» ամս., 1977, No. 12, էջ 56, ծան. 18:

Ա.

ՅԱԿՈՒ ՍՐՃԵՑԻ

Ասորական միաբնակ եկեղեցու նշանաւոր մատենագիրներէն է Յակոբ Սրճեցին, ծնուած՝ 451 թ., մեռած՝ 521 թ.: Մեծ համբաւ է վայելել որպէս բազմահմուտ հեղինակ եւ հոեատոր: Ունի այլազան բնոյթի գրուածքներ, որոնց թուում՝ բազմաթիւ ճառեր¹:

Հայկական մատենագրութեան մէջ Յակոբ Սրճեցու անունով յայտնի են մի շարք ճառեր՝ ասորերէնից թարգմանուած, ինչպէս նաեւ է Զարբհանալեանը՝ վենետիկեան ձեռագրերի եւ այլ աղբիւրների օգտագործմամբ²: Նրանցից մի որոշ մաս, ինչպէս

*Մեր այս շարքը, որ սկսել էինք հրատարակել 1977 թուականին «Էջմիածին» ամսագրում, հանդամանքների բերմամբ կանգ էր առել՝ երկու յօդուած լոյս տեսնելուց յետոյ: Գրանցից առաջինը նուիրուած էր «Արմատ հաւատոյ»-ում ընդգրկուած հեղինակներից Իրենէոս Լուզոնացուն («Էջմիածին», 1977, No. 8, էջ 41—47), իսկ երկրորդը՝ Բիտալիոս Անտիոքացուն եւ Գրիգոր Սքանչելագործին (անդ, 1977, No. 12, էջ 53—59): Այժմ շարունակում ենք շարքը՝ նոյն ծրագրով, ըստ որում մեր նպատակն է ոչ թէ տալ «Արմատ հաւատոյ»-ի աղբիւրների տեսութիւնը, այլ բնագրաբանական առումով քայլ առ քայլ քննել «Արմատ հաւատոյ»-ի եւ նրա աղբիւրների յարաբերակցութեան հարցերը:

¹ W. Wright, «A Short History of Syriac Literature», London, 1894, pp. 67—72.

² Հ. Գ. Զարբհանալեան, «Մատենագրան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 572—575:

եւ ուրիշներ, տպագրուել են Կ. Պոլսում 1722 թ.³:

ԱՀ-ում ունենք Յակոբ Սրճեցու անունը կրող երեք հատուածներ.

1. Յակոբայ Սրնոյ եպիսկոպոսի՝ ի քառէն որ յաստղն եւ ի մոգքն:

Մոգքն որք քննեցին զխորինս հարցուածովն իւրեանց ի ծնունդս Աստուածորդւոյն, լուրքիւն պահեցին ընտրողապէս: էջ 353ա:

Այս հատուածը խմբագրուած է մի գրուածքից, որը մեր ձեռքի տակ եղած օրինակում Յակոբ Մծբնացու անունն է կրում՝ «Ի ճառէն երանելոյն Յակովբայ Մծբնայ եպիսկոպոսի, յաղագս աստեղացն եւ մոգուցն եւ կոտորածի մանկանցն Բեթղէհէմի ի Հերովդէէ» (սկ. «Մագուսն մեծ, որ լցեր զաշխարհս»), Երեւանի Պետ. Մատենադարանի ձեռ. No. 993, էջ 27բ—29բ⁴:

Անտարակոյս՝ Սրնեցի անուան փոխարէն այստեղ Մծբնացի անունը թիւրիմացութիւն է: Այս ճառի սկիզբի հատուածը կայ Երե-

³ Տես «Գիրք եւ ճառ հոգեւոր, արարեալ յուղափառ եւ յաստուածարան վարդապետաց», Բիւզանդիա (Կ. Պոլիս), ի տպարանի Սարգսի, 1722: Հմմտ. Հ. Ա. Ղազիկեան, «Հայկական նոր մատենագիտութիւն», հտ. Ա, Վենետիկ, 1909, էջ 439—441:

⁴ Այս ճառը, որը տպագրուած է «Գիրք եւ ճառ հոգեւոր» ժողովածուի Գ. գլխում, այնտեղ նոյնպէս Մծբնացու անունն է կրում՝ «Ճառ երանելոյն Յակոբայ Մծբնայ եպիսկոպոսի աստեղացն յաղագս աստեղն եւ մոգուցն եւ մանկանցն Բեթղէհէմի»: Հմմտ. Հ. Ա. Ղազիկեան, էջ 439:

ւանի No. 3457 ձեռագրում՝ «Նորին Յակոբայ աստեղացն յաղագս աստեղն եկաւորութեան» (էջ 226ա—226բ) խորագրի տակ, առանց հեղինակի մականունան. սակայն յայտնի է, որ այս խորագրի «Նորին»-ը Սրճեցին է, որովհետեւ նախորդող բնագիրը, որ է «Նորին Յակոբայ աստեղացն՝ յաղագս Անտիոքայ քաղաքին թէ ո՛րպէս մտին աշակերտել զնա առաքեալքն» (սկ. «Լուսով բանիւ [ըն] դամ առ քեզ», էջ 225բ—226ա), ուղղակի Յակոբ Սրճեցու անունն է կրում ուրիշ շատ ձեռագրերում⁵: Որ այս ճառը Սրճացո՛ւն է պատկանում եւ ո՛չ թէ Մծբնացուն, հաստատուում է յիշեալ No. 3457 ձեռագրի եւ ԱՀ-ի միաձայն վկայութեամբ:

ԱՀ-ի հատուածը բառական քաղուածք է այս ճառից, այլ խմբագրուած է ազատօրէն: Հետեւենք No. 993 ձեռագրին: ԱՀ-ի այն խօսքերը, թէ մոգերը քննեցին զխորինս հարցուածովն իւրեանց ի ծնունդս Աստուածորդւոյն, խտացումն են ճառում արտայայտուած մտքերի, ըստ որոնց՝ մոգերն, աստղի առաջնորդութեամբ հասնելով Բեթղէհէմի այրը եւ երկրպագելով նորածին արքային, հոգեկան ազդումով կանխատեսում են նրա կատարելիք նուաճումները: «Յայնմհետէ սկսաւ արքայն նորածին դարձուցանել զգերութիւն հեթանոսաց եւ յաշխարհէն ներքովթայ արար սկիզբն՝ ժողովել զցրուեալսն ազանց մոլորելոց: Անդրանիկն թագաց երկրպագեաց նմա ի ձեռն մոգուցն, զի հանդերձ նովաւ ընկրկեսցին ամենայն թագք երկրի պատուել զնա. թագաւորութիւնն այն որ զլուս էր սկայից, ծառայեաց նմա, զի լիցի աւրինակ ամենայն երկրի նմանել նմա» (էջ 28բ), «հաւար է եւ զաշխարհ

⁵ Տես Երեւանի Պետ. Մատ. ձեռ. No. 4749 (էջ 263բ—275բ) եւ No. 5387 (էջ 46ա—51բ) եւ ուրիշներ: Նոյնպէս է նաեւ Ս. Ղազարի հայերէն ձեռագրերում եւ, իբրեւ այդպիսին, յիշուած է նաեւ ասորական ձեռագրերում. հմմտ. Հ. Գ. Զարբհանալեան, էջ 574:

⁶ Խօսքը վերաբերում է Պարսից հօր թագաւորութեանը, որի ներկայացուցիչն էր, ըստ պարսկանոսների վկայութեան, Մելքոն մոգ թագաւորը: «Քանզի յայնմ ժամանակի թագաւորութիւն Պարսից զօրաւոր էր եւ յաղթող քան զայլ թագաւորսն՝ որ էին յաշխարհն Արեւելից. եւ սոքա որք էին թագաւորք մազուցն՝ եղբարք երեք. առաջինն Մելքոն, որ ունէր զիշխանութիւն Հնդկաց. եւ երրորդն Գասպար, որ ունէր զաշխարհն Արաբացոց» (տես «Անկանոն գիրք Նոր Կտակարանաց», Վենետիկ, 1898, էջ 19—20):

ամենայն ըմբռնելոց է քաջութեամբ իւրով, երկինք լուսաւորաւք վկայէ թագաւորութեան դորա՝ զի մեծ է արքայութիւն դորա, եւ անկանին առաջի դորա տէրութիւնք լուսոյ. ի վերին կամարս հաստատութեան տեսաք զլոյս դորա, զի լոյս արեգական ոչ հաւասարի ճառագայթից դորա. հաստատութիւնք երկնից մեծ արքայ գիտեն զզա եւ սքանչելեաւք ծանուցին մեզ զահեղ մեծութիւն դորա» (էջ 29ա): Սրճեցին այնուհետեւ պատմում է, որ մոգերը, նորածին արքային սպասող փառքը յայտնութեան ուժով տեսնելուց յետոյ, որոշեցին չհանդիպել Հերովդէս թագաւորին, որն սպասում էր նրանց քննութեան արդիւնքներն իմանալու, որպէսզի սպանել տար նորածինին. «Պատուեցաւ թագաւորն թագաւորաց ի մոգուցն. եւ պատարագաւք երկիր պագին նմա եւ չոզան զնալ ցնծութեամբ. փոխեցին զճանապարհն եւ ոչ զնացին առ Հերովդէս՝ զի ծանեան զենեք նորա» (էջ 29ա). այս վերջին խօսքերն են, որ խտացուած են ԱՀ-ի հատուածում, թէ մոգերը լուրքիւն պահեցին ընտրողապէս:

ԱՀ-ի այս հատուածում, ընտրողապէս բառից յետոյ գալիս է «Ընդէ՞ր ոչ այսպէս ծանր լինի խորհուրդ նորա առ քննողսն կամ զրպարտողսն որք աւճտեն զնա զազանապէս հարցուածաւքն իւրեանց» (էջ 353ա—353բ) նախադասութիւնը, որը, մեր կարծիքով, Այգեկցու գրչից է եւ քննադատաբար քաղկեդոնականներին է ուղղուած, թէ ինչո՞ւ նրանք չեն հետեւում մոգերի օրինակին՝ Աստուածորդու մարդեղութեան հարցում, եւ նրան պատառոտում են իրենց հարցադրումներով:

2. Նորին՝ յետ սակաւուց.

Կայծակն հրեղէն զգեցաւ մարմին եւ էլ յաշխարհս, զի կիզցէ գորումն սերմանեալ չարին: էջ 353բ:

Բառացի փոխառութիւն է նոյն «Յաստղն եւ ի մոգքն» ճառից. «Կայծակն...սերմանեալ չարին յամենայն կողմանս» (ձեռ. No. 993, էջ 29ա):

3. Նորին՝ ի Յարութեան քառէն.

Չայսպիսի հրաշալի գործքս Միւսնիսն ո՞վ պատառէ եւ երկու բնութիւն լրբի ասել զՄիւսնիսն: էջ 353բ:

Համ. խմբ.ն ունի՝ Զայս հրաշալի... եւ երկուուրիս լրբի ասել զՄիածնին (էջ 34) :

Հատուածը քաղուած է հետեւեալ ճառից. «Երանելոյն Յակոբայ Սրճոյ եպիսկոպոսի ասացեալ ի Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ի զինուորսն որ պահէին զգերեզմանն» (սկ. «Յարութիւն քո, Տէր, զարթուցանէ զիս»), Երեւանի Պետ. Մատ. ձեռ. No. 4929, էջ 136ա—150բ :

Հեղինակը, Քրիստոսի յարութեան մէջ փառաբանելով աստուածային զօրութեան նշանները, գրում է. «Զայսպիսի թաղաւոր Հրեայքն սպանին եւ դատապարտեցան եւ ցրուեցան, ո՞վ երկմտէ վասն թաղաւորութեան եւ աստուածութեան նորա: Յայսպիսի Միածինս որ մեռաւ եւ յարեաւ, եւ է ի ծածուկ եւ յայտնի, ո՞վ իշխեսցէ քննել զմեծութիւն նորա: Զայս գործքս Միածինն ո՞վ պատահէ եւ երկու բնութիւն լրբի ասել զՄիածինն» (էջ 146ա—146բ)⁷:

բ.

ԶԵՆՈՒԹ ԵՂԵՍՍՅԻ ԿԱՄ ԳԱԶԻՐԱՅԻ

Ասորի եկեղեցական մատենագիր Դ. Ե. զբ. : Եփրեմ Խուրի Ասորու աշակերտներէց էր եւ նշանաւոր Իսահակ Անտիոքացու ուսուցիչը: Ասորական աղբիւրները նրա գրական աշխատանքներէց յիշատակում են ճառեր, նամակներ եւ այլն⁸:

Հայ մատենագրութեան մէջ նրա անունով յայտնի են մի շարք ճառեր⁹, որոնցից մի քանիսը տպագրուել են «Հանդէս Ամսօրեայ»-ում (1921—22 թթ.) եւ «Բաղմավէպ»-ում (1922 թ.) :

ԱՀ-ում նրա ճառերից բերուած են երեք հատուածներ.

1. Զեմորայ եպիսկոպոսի.

Մեք ոչ ասեմք՝ եթէ մահ մարմնոյն միայն է, որպէս ոչ ասեմք՝ թէ կեանք Բանին միայն է, այլ ասեմք՝ եթէ կեանք Բանին եւ մարմնոյն. եւ եթէ անարգանք եւ մահ՝ Բանին եւ մարմնոյն: էջ 354ա :

Համ. խմբ.ը չունի՝ եւ եթէ անարգանք

⁷ Այս ճառը տպագրուած է «Գիրք եւ ճառ հոգեւորական» ժողովածուի Թ. գլխում. հմմտ. Հ. Ա. Դադիկեան, էջ 439:

⁸ W. Wright, pp. 38—39.

⁹ Հ. Գ. Զարբհանաւեան, էջ 467:

եւ մահ՝ Բանին եւ մարմնոյն բառերը (էջ 35ա) :

Այս հատուածի աղբիւրին պատահում ենք ձեռագրերում: Երուսաղէմի No. 1549 ձեռագիրն ունի՝ «Երանելոյն Զեմորայ եպիսկոպոսին» (սկ. «Մեք ոչ ասեմք զմահն մարմնոյն միայն»), էջ 1626: Իսկ Զարբհանաւեանը վենետիկեան ձեռագրերից նշում է՝ «Վկայութիւն վասն մարդեղութեան» (սկ. «Եւ ոչ ասեմք եթէ մահ մարմնոյն միայն է»)¹⁰:

2. Զեմորայ եպիսկոպոսի.

Եկեր Գառն ուղարկու գգառն խորհրդայ, եւ ապա ետ գմարմին իւր աշակերտաց իւրոց: էջ 371ա :

Համ. խմբ.ն աղաւաղմամբ ունի՝ Եկեր գնշմարիտ գառն խորհրդայ... իւրոց (էջ 46ա) :

Ստուգ. օր.ն ունի՝ Ետ գմարմին եւ զարիւն իւր (էջ 22), ուր «եւ զարիւն» բառերի աւելացումը վրիպում է:

Հատուածը խմբագրուած է «Երանելոյն Զեմորայ եպիսկոպոսի՝ ի նոյն խորհուրդ [ի լուսացումն ոտից աշակերտաց]» ճառի հետեւեալ հատուածից.

«Յայսմ տաւնի՝ յորում եհատ Տէրն մեր զմարմին իւր սրով եւ բաշխեաց աշակերտացն, զի եղիցին ուտել երկիրի: Քանզի եկեր նախ Գառնն ճշմարիտ զգառնն խորհրդայ, եւ ապա եհատ զմարմին իւր, զի արար քեզ զերկոսեան մի, ըստ այնմ՝ զոր առաքեալ ասէ»¹¹:

3. Եփրեմի եւ Զեմորայ.

Ի գիւնոյն ա՛ն գպատառն, Եթաց ի ջուրն եւ լուաց ի Հոգւոյն շնորհացն եւ ետ Յուդայի: էջ 371բ :

Այս հատուածի վերնագրում եղած հեղինակային երկու անունների միակցումը, մեր կարծիքով, արդիւնք է Վարդան Այգեկցու աղբիւրում եղած զրուցեան: Ըստ երեւոյթին՝ այդ աղբիւրն է «Պաղոսի Տարաւնեցու յայլում գրոյ պատասխանոյն զոր զրեաց ընդզիմաղիր թղթոյն Թեոփեստի կոստանդնուպոլսի պատրիարքի երկարնակի» բնագիրը (Երուսաղէմի ձեռ. No. 1272, էջ 261բ—288ա), ուր տուեալ հարցի կապակ-

¹⁰ Անդ, էջ 467:

¹¹ Բագմավէպ, 1922, էջ 290:

ցութեամբ Եփրեմի եւ Զեմորի անունները միասնարար են առաջբերում.

«Յորժամ զխորհուրդն աւանդեաց՝ զինեաւ աւանդեաց. իբրեւ յարեաւ առ լոկ սեղանն զինի՛ արբ եւ ո՛չ ջուր: Զեմոր եղեսացի ասէ թէ՛ Թացեալ զպատառն տայ Յուդայի, զի թանալն ա՛յսպէս է, թէ ի զինոյն առեալ լուաց ջրով, եւ ապա ետ: Եփրեմ Ասորի ի նոյն բանի մեկնութեան՝ Լուաց, ասէ, զհացն յաւրհանութենէն եւ ապա ետ» (էջ 278ա—278բ) :

Պօղոս Տարօնեցու այս աշխատութիւնն անտիպ է:

Գ.

ԴԱՀԵՂԱ ԵՂԵՍՍՅԻ = ԱԹԵՂԱՀԱ ՈՒՌՀԱՅՅԻ

ԱՀ-ի է. գլխում բերում է հետեւեալ համառօտ հատուածը.

Որ է Աստուած, յԱստուծոյ եկն եւ եղիւ մարդ ի մարդկանէ ի ձեռն Հագւոյն Սրբոյ եւ ոչ փոխեաց գրնութիւն Աստուածութեանն: էջ 355ա :

ԱՀ-ի ձեռագրերում այս հատուածի հեղինակի անունը հանդէս է գալիս այլեայլ ձեւերով, որոնցից մի քանիսն ունեն կանոնաւոր տեսք՝ Դահեղայ Եղեսայ Եպիսկոպոսի (Երուսաղէմի ձեռ. 1331, որ է Վարդան Այգեկցու ստուգողական օրինակը) եւ յետոյ՝ Դակեղայ Եղեսի Եպիսկոպոսի (Երեւանի՝ 2080, 1337 եւ 4063. Վենետիկի՝ 266, Վատիկանի՝ Borg. 31, Փարիզի՝ Bibl. Nat. Arm. 153) :

Մի շարք ուրիշ ձեռագրերում Դահեղայ Եղեսայ (կամ Դակեղայ Եղեսի) բառերի փոխարէն գտնուած ենք այդ երկու բառերի միացումից ծագած աղաւաղումներ, բոլորն էլ սեռական հոլովով՝ Դահեղատեսայ (Երեւանի՝ 3295 եւ 4425), Դահեղատեսայ (Երեւանի՝ 6567, Երուսաղէմի՝ 2526), Դահեղատեսայ (Երեւանի՝ 1982), Դահեղատեսայ (Երեւանի՝ 7255 եւ 512): Այս միացեալ ձեւերի ոլորտում անուան ուղղական ձեւը կարող է լինել թէ՛ Դահեղ, թէ՛ Դահեղա (սեռական՝ Դահեղայ): Առաւել հաւանական ենք համարում երկրորդը:

Ձեւերի այս այլազանութեան մէջ զժուար չէր նկատել, որ մեր հեղինակը Եղեսայի եպիսկոպոս էր եղել: Սակայն Եղեսայի եպիսկոպոսների շարքում նման ձեւեր ունեցող

անուններ չէին երեւում: Բանասէր Լեւոն Տէր-Պետրոսեանի թելադրանքով մենք փորձեցինք աղաւաղուած այս անուանաձեւերը համեմատութեան դնել Այիթալա Ուռհայեցու նոյնպէս աղաւաղ Արեղահա անուանաձեւի հետ եւ համեմատութիւնը տուեց յաջող արդիւնք, իսկ Հ. Յովհաննէս Թորոսեանն արդէն կատարել էր Արեղահա եւ Այիթալա անունների նոյնացումը: ԱՀ-ի հատուածի հեղինակը՝ Դահեղան, ուրեմն, Այիթալա Ուռհայեցին էր¹²:

Ասորի Այիթալա Ուռհայեցին Միջագետքի այն եպիսկոպոսներից էր, որոնց ստորագրութիւնները տեսնում ենք Նիկիայի առաջին ժողովի որոշումների տակ, 325 թուականին. այնտեղ նա յիշատակուած է, ըստ ձեռագրական տարբերակների, Արաղաս, Արաղասա, Արաղայաս, Արաղոս, Արաղոսա, Երաղասա, Ապրաւսքակայ, Արաղայակ ձեւերով¹³: Մովսէս Պորենացու մօտ նա յիշատակուած է Արաղայ, Արաղայ եւ Երաղ գրչական տարբերակներով¹⁴: Այիթալա Ուռհայեցին մահացել է 345/346 թթ.:

Ե. դարի հայերէն թարգմանութեամբ մեզ յայտնի է Այիթալայի մի հովուական թուղթը, որն, ըստ երեւոյթին, ուղղուած է ասորածէս եւ ասորալեզու պարսիկ քրիստոնեաների եւ որի սկզբնաղբը զեռ չի յայտնաբերուած ասորական գրականութեան մէջ: Հ. Յ. Թորոսեանն այդ բնագիրը հրատարակել է Վենետիկի Միթարեան Մատենադարանում գտնուող միակ ձեռագիր օրինակից¹⁵:

ԱՀ-ի վերոյիշեալ հատուածը խրմբագրուած է Այիթալայի հովուական թղթի վերջարանից, որ է՝

«Այս են հաւատք ճշմարիտ որպէս հաւատայ եկեղեցի որ փրկեցաւ ծանրագին ար-

¹² Այիթալա Ուռհայեցու մասին տես Յ. Ս. Անասեան, «Հայկական մատենագիտութիւն», հտ. Ա, Երեւան, 1959, էջ 713—714:

¹³ Տես եւ հմմտ. «Կանոնադիր Հայոց» (հրատ. Վազգէն Յակոբեանի), հտ. Ա, Երեւան, 1964, էջ 139:

¹⁴ Հմմտ. «Մովսէսի Պորենացու Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 240:

¹⁵ «Աթեղահայ եպիսկոպոսի Ուռհայի Թուղթ առ քրիստոնեացս աշխարհին Պարսից վասն հաւատոց: Ուսումնասիրեաց եւ ի լատին լեզու թարգմանեաց Հ. Յովհաննէս Թ. Ա. Թորոսեան, միանձն Միթարեան», Վենետիկ, 1942:

եամբ Միածնին Աստուծոյ, որ է Աստուած յԱստուծոյ, եկն եւ եղեւ մարդ ի մարդկանէ. իբր ոչ եթէ զընութիւն Աստուածութեանն փոխեաց ինչ, այլ մինչ էր ի սուրբ արգանդի Կուսին, յամենայն յարգանդս սաղմ նկարէր եւ միշտ շինէր զտաճարն իւր Հոգւովն Սրբով»¹⁶ եւ այլն:

Այլթալայի այս հատուածում «յԱստուծոյ» բառից յետոյ դրուած ստորակէտը մենք համարում ենք վրիպում՝ հրատարակչի կողմից, որովհետեւ դրանով կտրուում է քերականական կապակցութիւնը նախադասութեան «որ է Աստուած յԱստուծոյ» եւ «եկն եւ եղեւ մարդ ի մարդկանէ» մասերի միջեւ, իսկ այդ կտրուածութիւնը վերացնելու համար լուսազոյն դէպքում անհրաժեշտ է լի-

¹⁶ Անդ, էջ 74:

նում աւելացնել մի շաղկապ: Ինչպէս երեւում է՝ այդ կտրուածութիւնն զգալով է, որ հրատարակիչը, բնագիրը լատիներէնի թարգմանելիս, անհրաժեշտաբար աւելացրել է «եւ» շաղկապը. «qui est Deus de Deo, et venit et factus est homo ex muliere»¹⁷.

Մենք ԱՀ-ում այդ ստորակէտը տեղադրեցինք «յԱստուծոյ» բառից առաջ եւ դրանով երեւան եկաւ նախադասութեան անթերի ներդաշնակութիւնը՝ առանց շաղկապի. «որ է Աստուած, յԱստուծոյ եկն...»:

Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ

¹⁷ Անդ, էջ 75: Մեր կարծիքով՝ «Աստուած յԱստուծոյ» կարգալու մղումն առաջացել է հաւատոյ հանդանակի «Աստուած յԱստուծոյ, լյսս ի լուսոյ» արտայայտութիւնից:

ՍԻՄԱՔԵԱՆ ՄԻ ՏԱՐԸՆԹԵՐՅՈՒԱԾ՝ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՁԻ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՁԱԳՐԵՐՈՒՄ (ՎԵՑԻՋԵԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ)

Մեր թուականութեան Գ. դարում, երբ Որոզինէս Աղեքսանդրացին ձեռնամուխ էր լինում Հին Կտակարանի յունարէն Եօթանասնից կոչուած Հին թարգմանութեան բնագրական ստուգման ու վերաքննութեան աշխատանքներին, անհրաժեշտ էր համարել նաեւ հաշուի առնել երբայերէնից յունարէն կատարուած մի քանի նոր թարգմանութիւններ, որոնք կարող էին որպէս եզր ծառայել համեմատութիւնների համար: Այդպիսիներ էին Բ. դարում Ակիւղաս Պոնտացու, Սիմաքոս Սամարացու եւ Թէոդոտիոն Եփեսացու կատարած թարգմանութիւնները:

Որոզինէսի աշխատանքների էությունը կայանալու էր գոյութիւն ունեզոյ չիտական այս հիմունքները միասնաբար ընդգրկելու ատակ մի կառոյց ստեղծելու մէջ: Այդ կառոյցը հանդիսացաւ Վեցիջեանի (Τὰ Ἑξαπλά) անուանեալ նրա նշանաւոր աղիւսակը, որը կազմուած էր վեց սիւնակներից:

1. Երբայական բնագիրը՝ երբայական տառերով.
2. Երբայական բնագիրը՝ յունական տառադարձութեամբ.
3. Ակիւղասի թարգմանութիւնը.
4. Սիմաքոսի թարգմանութիւնը.
5. Եօթանասնից բնագիրը՝ ըստ Որոզինէսի համեմատութեան արդիւնքների.
6. Թէոդոտիոնի թարգմանութիւնը:

Այս աղիւսակի 5-րդ սիւնակի հիման վրայ է, որ հետագայում Պամփիլոս եւ Եւսերիոս Կեսարացիները կազմեցին Եօթանասնից թարգմանութեան վերանայուած բընագիրը, եւ այս վերջինս է այն «հաստատուն», «ճշմարիտ» եւ «ստոյգ» օրինակը, որից եւ, ինչպէս ասում են մեր պատմական աղբիւրները, առաջացաւ հայկական թարգմանութիւնը:

Յունական Եօթանասնիցի այդ քննական օրինակների, ինչպէս եւ նրանից ծագած հայկական, ասորական եւ այլ թարգմանութիւնների հնագոյն նմուշներից շատերի վրայ յաճախ են երեւում որոզինեան Վեցիջեանի որոշ հետքեր՝ պայմանական նշաններով եւ կամ նրա այս կամ այն սիւնակի ընթերցում-

ների նշումներով: Այդ հետքերը երբեմն շատ ուշագրաւ են՝ սուրբգրային բնագրական հետազոտութիւնների բնագաւառում ունեցած իրենց որոշիչ դերով: Այդպիսի դեպքերը թանկարժէք են նաեւ հենց Վեցիջեանի պատմութեան համար ընդհանրապէս, նըկատի ունենալով, որ Վեցիջեանն իր ամբողջական կազմով չի հասել մեզ, այլ միայն որոշ մասերով՝ հատկորոններով:

Աստուածաշունչ Մատեանի հայկական թարգմանութիւնը, որը յունական Եօթանասնիցի լուսազոյն ներկայացուցիչներից մէկն է, ԺԳ—ԺԴ. դարերում ընդօրինակուած բազմաթիւ ձեռագրերում կրում է, Վեցիջեանի այդ նշանների հետ, նաեւ լուսանցային որոշ տարընթերցուածներ՝ Ակիւղասի, Սիմաքոսի եւ Թէոդոտիոնի թարգմանութիւններից: Այսպիսիներ են՝ Երեւանի Պետ. Մատենադարանի No. 178 (1253—55 թթ.), No. 4243 (1263 թ.), No. 345 (1270 թ.), No. 193 (1271 թ.), No. 179 (1292 թ.), No. 177 (1292 թ.), No. 180 (1295 թ.), No. 353 (1317 թ.), No. 206 (1318 թ.) ձեռագրերը եւ ուրիշներ: Այսպիսի մի օրինակ է նաեւ Ս. Ղազարի Մխիթարեան Մատենադարանի No. 1 ձեռագիրը (1319 թ.), որը եւ հայկական Աստուածաշնչի քննական առաջին հրատարակութեան համար որպէս հիմնական օրինակ է ծառայել Հ. Յովհաննէս Չոհրապետանին (Վենետիկ, 1805 թ.): Այս իրողութեան մասին խօսելու առիթով՝ մենք ուշադրութեան առարկայ էինք դարձրել հետաքրքրական մի փաստ: Դա այն էր, որ մի քանի ձեռագրերում Բ. Թաղաւորութեանց Գ. գլխի 33 տան մէջ միեւնոյն նախադասութիւնը կրկնուել էր երկու տարբերակով.

«Միքէ որպէս մեռանիցի անզգամ՝

¹ Հայերէն ձեռագրերում եղող այս տեղեկութիւնների եւ նրանց վերաբերող յաջորդ մանրամասնութիւնների մասին մի անգամ ընդ միշտ տեսնել մեր «Հայկական մատենագիտութիւն» աշխատութեան Բ հատորը, Երեւան, 1976, էջ 331—334: